№ 134 ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 21 **1900** ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 21 № 134

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարուան 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». *կամ* Tiflis, Rédaction «Mschak». *Տելէֆօն* № 253.

Ընդունակութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տելէֆօն № 253.

Ուրբաթ, յուլիսի 21-ին, Մօսկվայում վախճանված

ԳՐԻԳՈՐ ԱԻԵՏԻՄԵԱՆ ՋԱՆԹԵԱՆԻ

Թաղման օրը, Մոլնու ս. Գէորգ եկեղեցում պատարագ կը մատուցուի հանգուցեալի յիշատակին, իսկ պատարագից յետոյ, ժամի 1-ին, կը կատարուի հոգեհանգիստ, որի մասին սրտի ցաւով յայտնում են ազգականներին եւ ծանօթներին Ալէքսանդր Աւետիսեան եւ Եւգենիա Գաբրիէլեան Ջանչեանները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նպատակաւոր տրամադրութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ջինական գործեր. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն. Մարդկանց գտտաստանք:

ՆՊԱՍՏԱՒՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Ահա քանի տարի է, որ մեր կովկասեան քաղաքները ջանք էին անում բանալ ա ր դ ի ւ ն ա գ ո ր ծ ա կ ա ն դպրոցներ. բայց մինչեւ այժմ անկարող եղան իրագործելու իրանց դիտաւորութիւնները, չը նայելով այն հանգամանքին, որ իրանց վրա էին վերցնում լինելիք ծախսերի մի մասը: Ուսումնական բարձր շրջաններում այդպիսի խնդիրները ձգձգւում էին և արագ ընթացք չէին ստանում:

Այժմ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը լինքն է նախաձեռնում հանդիսանում այդ ասպարէզում և հրաւէր է կարդում բանալու այդպիսի դպրոցներ: Մինիստրութիւնը պաշտօնապէս դիմել է ուսումնական շրջանի հոգաբարձուներին և նրանց թուում կովկասեան շրջանի հոգաբարձուին, խնդրելով տեղեկացնել, թէ ո՞ր տեղերում կարելի է բանալ արդիւնագործական դպրոցներ, թէ ի՞նչ տիպի պէտք է պատկանեն այդ դպրոցները՝ ստորին, միջնակարգ կամ բարձրագոյն և թէ ի՞նչ մանագիտութիւն պէտք է նրանք բովանդակեն իրանց մէջ:

Արդիւնագործական դպրոցները պէտք է յարմարեցրած լինեն տեղական պահանջներին և կարող են մշակել իրանց համար սեփական ծրագիրներ, բոլորովին տարբեր ուրիշ դպրոցների ծրագիրներից: Ծրագիրը մշակելու այդ ազատութիւնը հեշտացնում է գործը, որովհետև գործնական կեանքի մէջ զանազան ձեռնարկութիւններ շատ անգամ կանգ են առնում հէնց այն պատճառով, որ նրանք անկարող են յարմարվել որոշված ձևերին:

Դպրոցների բացման նպաստող ամենաէական պայմաններից մէկն է նիւթական միջոցների ապահովութիւնը: Մինիստրութիւնը ազատ գումարներ չունի մեծ քանակութեամբ, ուստի նա դպրոցներ բանալու ժամանակ գերապատութիւն է տալիս այն տեղերին, որոնք ունեն տեղական միջոցներ և կարող են ապահովել բացվելիք դպրոցի բոլոր ծախսը կամ այդ ծախսի մի նշանաւոր մասը:

Պէտք է օգտվել մինիստրութեան նպաստաւոր տրամադրութիւնից և առաջ տանել արդիւնագործական դպրոցներ բանալու խնդիրը մեր երկրում: Թող իւրաքանչիւր քաղաք հոգայ այդ մասին, կազմէ հմուտ անձերից խորհրդակցութիւն, մշակէ դպրոցի ծրագիրը, որոշէ տեղական դրամական նպաստների քանակութիւնը և խնդրամատոյց լինի ուսումնական շրջանի հոգաբարձուին: Մինիստրութիւնը պատրաստ է իր կողմից ուղարկելու մասնագէտ անձանց, որոնք մշակեն ծրագրի մանրամասնութիւնները և վերջնականապէս ձևակերպեն դպրոցի բացման բոլոր պայմանները:

Օգտվենք յարմար դէպքից: Այն, ինչ որ ուրիշ ժամանակներում պահանջում էր տարիներ և դարձեալ ճնում էր անհեռանք, այժմ կարող է արագ ընթացք ստանալ և շուտով իրագործվել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Յայտնի է թէ որքան սաստիկ են ազգային նախապաշարմունքները մեր մէջ: Շատ յաճախ նախապաշարմունքները մի ազգի, ինչպէս եւ ամեն մի անհատի համար, կատարեալ աղէտ են դառնում, զարգացնելով անհիմն երկիւղներ, մատավախութիւն այն աստիճան, որ իրա կանութիւնն անգամ մոռացվում է եւ նախապաշարմածը սքանչելի անդորրութիւն է գտնում աչքերը փակելով եւ երեւակայելով թէ իր չուրջը ամեն ինչ լաւ ու գեղեցիկ է: Փորձեցէք, օրինակի համար, խօսել հայ գրագէտի հետ թէ ինչու Զօլայի «Պարիզ» վէպը չէ թարգմանվում հայերէն: Դուք իսկոյն կը լսէք պատասխան, որ զօլայականութիւնը բարքեր փչացնող է, որ հայ նահապետական կեանքի համար այդ տեսակ գրուածքները թոյն են եւ այլն: Եւ սակայն նայեցէք ձեր չուրջը. Զօլայի վէպերը տարածված են ամեն տեղ, կարդացվում են ընտանիքներում. հայ երիտասարդը, հայ տիկինը լաւ գիտեն Ռուգօն-Մակկարների ոտհվաբանութիւնը, նրանց առաջացրած տիպերը, որոնք հռչակաւոր վիպագրողի գրչով նկարված եւ միլիոնաւոր օրինակներով աշխարհի բոլոր անկիւնները ցրված դէմքեր են: Եւ ինչու չը պիտի այսպէս լինի: Հօ Զօլան համաշխարհային հռչակ ստացել է ոչ թէ այն պատճառով, որ նրան կարդում է մարդկանց մի սահմանափակ չրջան, այն էլ այնպիսի մարդկանց, որոնք բարոյականութեան, ամօթի, պատի մասին յեղաշրջված հասկացողութիւններ ունեն: Ոչ, եթէ Զօլան համարձակ է մարդկային կեղտերն ու արատները նկարագրելու մէջ, ընթերցող աշխարհը նրանից աւելի համարձակ է, ամենայն ուշադրութեամբ կարդալով նրա վէպերը: Մեր ազգային նիկար իմաստունները այդպէս չեն. Թող, ասում են, հայ օրիորդը կարդայ «Պարիզը» ֆրանսերէն, ռուսերէն, գերմաներէն եւ այլ լեզուներով, բայց մենք հայերէնը չենք տայ, որպէս զի մեր ընտանեկան բարքերը չը փչանան այն մեղկ իրականութիւնից, որ տալիս է Զօլան: Միթէ նման չեն այդ նիկարները ջայլամին, որ թագցնում է գլուխը եւ կարծում է թէ իրան տեսնող չը կայ: Եւ եթէ մեր լեզուն այնքան մոռացված ու արհամարհված է, մի՞թէ պատճառներից մէկն էլ այն չէ, որ մինչեւ ամբողջ աշխարհը զանազան լեզուներով կարդում է, դիցուք, Զօլայի վէպերը, հայ ընթերցողը պիտի դիմէ օտար գրականութիւններին, որովհետեւ մենք այդ ժամանակ, հաւատարիմ մնալով մեր ազգային նախապաշարմունքներին, վանականաձեւաւորական հայեացքներ ունենք բարոյականութեան մասին: Այսպէս են յետադիմում ազգերը, այսպէս են նրանք կորցնում կենսունակութիւնը եւ հարկադրված են լինում ուրիշների խնճոյքը հեռուից դիտելու բաւականութեան մէջ սահմանափակվել:

Զօլայի դէմ նախապաշարմունքը սաստիկ էր մանաւանդ մի այնպիսի կղերական ոգով տոգորված չրջանում, ինչպիսին է կ. Պոլսի հայութիւնը: Եւ այդ նախապաշարմունքի դէմ վերջերս դուրս եկաւ մի հայ աղջիկ, օրիորդ Նարդիկ Եաղուպեան, որ «Արեւելքի» մէջ տպագրեց մի թարգմանութիւն Զօլայից: Երեւոյթն այնքան անսովոր էր, որ լրագիրը նրան մի ամբողջ առաջնորդող նուիրեց:

Երեւակայեցէք, այսչափ տարուան վարանումներէ ետքը վերջապէս Զօլայէն չենք չնորհք գործ մը հայերէնի կը թարգմանուի, եւ ան ալ աղջկան մը կողմէ...

Զոլա եւ հայ աղջիկ...ահ սրբապղծութիւնը: Դեռ քանի մը տարի առաջ կատարեալ ոճիր մը կը համարուէր այդ մերձեցման գաղափարն իսկ, ոչ թէ միայն մեր աղջիկներուն, այլ նաեւ մեր մանչերուն համար ալ: Ո՞վ մոռցած է այն ահագին պայքարը որ այդ գաղափարին չուրջը մղուեցաւ կարգ մը միակողմանի եւ արուեստին ըմբռնումէն բոլորովին զուրկ ուղղութիւններու կողմէ՝ որոնք լայնքով երկայնքով իրար անցած՝ իրր աչխարհի ամէնէն ահարկու հրէշը ներկայացնել կը ճգնէին Զոլան եւ անոր հետ ամբողջ գրականութիւն մը: Սիւնակներով, էջերով յօդուածներ գրուեցան սխալ ըմբռնուած ու գրեթէ կեղծ բարոյականի խնդիր մը յուզուեցաւ, ու վերջ ի վերջոյ ոճիրի գաղափարը նետուեցաւ մէջտեղ: Ոճիր մըն էր Զոլան կարդալը. պէտք էր զայն հեռու պահել մեր մատաղ ու հասուն սերունդէն: Եւ այս ամէնը մոլեռանդութեան անմնչի թափով մը՝ որ կարելի է առանց այլ եւ այլի ըսել թէ վաղանցուկ բարքերը չը փչանան այն մեր իրականութիւնից, որ տալիս է Զօլան: Միթէ նման չեն այդ նիկարները ջայլամին, որ թագցնում է գլուխը եւ կարծում է թէ իրան տեսնող չը կայ: Եւ եթէ մեր լեզուն այնքան մոռացված ու արհամարհված է, մի՞թէ պատճառներից մէկն էլ այն չէ, որ մինչեւ ամբողջ աշխարհը զանազան լեզուներով կարդում է, դիցուք, Զօլայի վէպերը, հայ ընթերցողը պիտի դիմէ օտար գրականութիւններին, որովհետեւ մենք այդ ժամանակ, հաւատարիմ մնալով մեր ազգային նախապաշարմունքներին, վանականաձեւաւորական հայեացքներ ունենք բարոյականութեան մասին: Այսպէս են յետադիմում ազգերը, այսպէս են նրանք կորցնում կենսունակութիւնը եւ հարկադրված են լինում ուրիշների խնճոյքը հեռուից դիտելու բաւականութեան մէջ սահմանափակվել:

Զօլայի դէմ նախապաշարմունքը սաստիկ էր մանաւանդ մի այնպիսի կղերական ոգով տոգորված չրջանում, ինչպիսին է կ. Պոլսի հայութիւնը: Եւ այդ նախապաշարմունքի դէմ վերջերս դուրս եկաւ մի հայ աղջիկ, օրիորդ Նարդիկ Եաղուպեան, որ «Արեւելքի» մէջ տպագրեց մի թարգմանութիւն Զօլայից: Երեւոյթն այնքան անսովոր էր, որ լրագիրը նրան մի ամբողջ առաջնորդող նուիրեց:

Երեւակայեցէք, այսչափ տարուան վարանումներէ ետքը վերջապէս Զոլայէն չենք չնորհք գործ մը հայերէնի կը թարգմանուի, եւ ան ալ աղջկան մը կողմէ...

Զոլա եւ հայ աղջիկ...ահ սրբապղծութիւնը: Դեռ քանի մը տարի առաջ կատարեալ ոճիր մը կը համարուէր այդ մերձեցման գաղափարն իսկ, ոչ թէ միայն մեր աղջիկներուն, այլ նաեւ մեր մանչերուն համար ալ: Ո՞վ մոռցած է այն ահագին պայքարը որ այդ գաղափարին չուրջը մղուեցաւ կարգ մը միակողմանի եւ արուեստին ըմբռնումէն բոլորովին զուրկ ուղղութիւններու կողմէ՝ որոնք լայնքով երկայնքով իրար անցած՝ իրր աչխարհի ամէնէն ահարկու հրէշը ներկայացնել կը ճգնէին Զոլան եւ անոր հետ ամբողջ գրականութիւն մը: Սիւնակներով, էջերով յօդուածներ գրուեցան սխալ ըմբռնուած ու գրեթէ կեղծ բարոյականի խնդիր մը յուզուեցաւ, ու վերջ ի վերջոյ ոճիրի գաղափարը նետուեցաւ մէջտեղ: Ոճիր մըն էր Զոլան կարդալը. պէտք էր զայն հեռու պահել մեր մատաղ ու հասուն սերունդէն: Եւ այս ամէնը մոլեռանդութեան անմնչի թափով մը՝ որ կարելի է առանց այլ եւ այլի ըսել թէ վաղանցուկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենից առաջ, ուրեմն, հայ հոգեւորականի պատուէրն էր Լեհաստանի հայ եկեղեցու հիմքերը փորողը: Բայց տգիտութիւնը եթէ մի փոքր պարտաճանաչութիւն ու ազնուութիւն ունենար, ցաւը այնքան մեծ չէր լինի, քանի որ ժողովրդի յերմեռանդ աւանդապահութիւնը եկեղեցու կողմն էր եւ պաշտպանում էր նրան: Դժբախտութիւնը հէնց այն է, որ տգիտութեան հետ անբաժան են եւ ամեն տեսակ արատներ: Ցաւալի է, որ Լեհաստանի հայերի կաթոլիկացման պատճառը մի արատաւոր հոգեւորական էր, Նիկոլը: Բայց ինչ էր Նիկոլը: —Մելքիսէթ կաթողիկոսի ձեռքի պատուղը:

Մենք արդէն տեսանք այս վեղարաւոր խաղին Հայաստանի մէջ: Տեսանք նրան պարսիկ զինուորների հետ ժողովուրդը անխիղճ բռնութիւններով կեղեքելիս, որպէս զի փող գլլէ եւ պարսից կառավարութեան վճարէ իր կաթողիկոսութեան կապալավարձը: Կեղտոտ միջոցներով ձեռք բերած իշխանութիւնը կատարեալ պատուհաս է դառնում փառամոլի համար: Մելքիսէթը կեղեքում էր, բայց նրան էլ լաւ կեղեքում էին նրա հետ մոտ եկող պարսիկ զինուորները. ուստի որքան էլ հաւաքում եւ վճարում էր հայոց կաթողիկոսը,—պարտքը, այնու ամենայնիւ, աճելով աճում էր. եւ որքան նրան սաստիկ էին խեղդում պարսիկները, այնքան նա սաստկացնում էր իր կեղեքումները ժողովրդի մէջ: Ժողովուրդը համբերեց, համբերեց, բայց վերջը երես դարձրեց իր կաթողիկոսից, եւ նա հալածական դարձաւ:

Ոչ մի տեղ ընդունելութիւն եւ համակրանք չը գտնելով, նա, վերջապէս, փախաւ գնաց Լեհաստան՝ այնտեղի հայերին խուզելու համար: Եւ լեհահայը տալիս էր: «Շատ եւ յոյով տուգանք տըւաք, անթիւ արծաթ ոսկի տարանք, թէ նովաւ զհոգիս փրկէաք»—ասում է մի լեհահայ ժամանակագիր *): Բայց Մելքիսէթի ընչաքաղցութիւնը կամաւոր նուէրներով բաւականացողը չէր. ինչպէս Հայաստանում, այստեղ էլ նա չուզեց զրկել իրան ձեռնադրութիւններից ստացվող եկամուտից. եւ կանչում էր վարդապետներին ու սիրացուներին, հարցնում էր ամեն մէկին թէ ինչ կը տան, եթէ եպիսկոպոս կամ վարդապետ ձեռնադրէ: Սակարկողների թուում էր եւ Նիկոլը. կաթողիկոսը համաձայնվեց 150 ղրուշով եպիսկոպոսութիւն տալ նրան: Ժողովուրդը, որ լաւ էր ճանչում Նիկոլին, միաբերան բողոք բարձրացրեց, չէր ընդունում նրան. բայց Մելքիսէթը պիտի ականջ դնէր ժողովրդի ձայնին: Գիշերը, թագուն կերպով, նա տարաւ Նիկոլին քաղաքից դուրս մի վանք եւ այնտեղ ձեռնադրեց՝ 150 ղրուշից չը զրկվելու համար: Ժողովուրդը փորձում է այդտեղ արգելելու, խնդրում, աղաչում է, բայց կաթողիկոսը, ինչպէս պատմում է Առաքելը, աթոռի վրա նստած ձեռնադրում էր Նիկոլին եւ մի եւ նոյն ժամանակ ձեռքում բռնած խաչով սաստում էր բողոքաւորներին: Վեղձ ժողովուրդը գիտէ իր գլխին գալիքը, այնքան զայրանում է այդ բացարձակ խաբեբայութիւնից եւ զզուելի կաշառամոլութիւնից, որ «մի քիչ եւս՝ եւ գէնք կառնէր ու մասմաս կը կտորէր թէ կաթողիկոսին եւ թէ նրա ձեռնադրածին» *). Կաթողիկոսը դիմում է մի նոր խաբէութեան, ասելով թէ Նիկոլը Հայաստանի համար է ձեռնադրված եւ այսպէս ազատելով իր օձիքը, Լվովից գնում է դէպի Կամենց քաղաքը: Սակայն ճանապարհին, երեւի նոր կաշառք ստանալով, արհամարհում է ժողովրդի տրամադրութիւնը, թողնում է գրում լվովցիներին եւ նզովում է նրանց, որոնք Նիկոլին չեն ընդունի առաջնորդ: Կամենեցում Մելքիսէթը վախճանվում է (1627), չը կարողանալով վայելել այդ տեսակ միջոցներով հաւաքած իր փողերը:

Բայց յանցանքը կատարված էր. հայ եկեղեցականութեան արատների վրա բարդվում է մի նորը, ամենից չատ զզուելին. դա 150 ղրուչի գումարն է, Լեհաստանի հայոց եկեղեցու գինը: Սկավեցան խռովութիւններ, մաքառումներ, որոնք երկար տարիներ ալեկոծում էին լեհահայերին: Բայց զուր էր ամեն ինչ: Ոչ Մովսէս կաթողիկոսի ջանքերը, ոչ ժողովրդի միաբան դիմադրութիւնը չը կարողացան յաղթահարել Նիկոլին, որովհետեւ սա, իր իշխանութիւնը պահպանելու համար, միայնակ կաթոլիկ կղերականների հետ, մտաւ եզուիտների ու Պրօպագանդայի պաշտպանութեան տակ եւ բռնութիւններով գնաց ժողովրդի յամառութեան դէմ: Պէտք է ի նկատի ունենալ, որ կաթոլիկ կրօնաւորները, չը նայած իրանց ճարպիկութեան եւ այժին, չէին կարողանայ հեշտութեամբ հասնել իրանց նպատակին, եթէ նրանց չաջակցէին կաթոլիկացած հայ հոգեւորականները: Սա մի պատմական օրէնք է, որը նկատել կարող ենք նոյն իսկ մեր օրերում: Յայտնի է, որ կաթոլիկութիւնը առաջին անգամ Հայաստանի մէջ մտցնողները հայ ունիթօրներն էին, յայտնի է որ այդ փանատիկոսները կատաղի անհաշտութեան այնպիսի անվայել աստիճանների էին հասնում, որ նոյն իսկ Հռոմի աթոռը հարկադրված էր լինում սանձահարել նրանց: Հայը այդպէս էր ոչ միայն Հայաստանում, այլ եւ Եւրոպայում: Լեհաստանի գործը հայի ձեռքով սկսվեց եւ հայի ձեռքով էլ վերջացաւ: Մենք իրաւունք չէինք ունենայ կղերական այս ահագին պայքարների վրա առանձին ուշադրութիւն դարձնել, եթէ նրանք չը պատահէին ազգը, եթէ նրանց սերմանած փոխադարձ ատելութեան ու եղբայրասպան թշնամութիւնը այնքան աղէտներ չառաջացնէին առանց այդ էլ մի դժբախտ, հոգեվարք ազգի մէջ: Մենք չուտով կը տեսնենք, որ հայկական տպագրութիւնն էլ մեծամեծ հալածանքներ է կրել կաթոլիկ կղերականից եւ գլխաւորապէս հայ կաթոլիկից:

Կէս դար չարունակված խռովութիւններից եւ մաքառումներից յետոյ Լեհաստանի հայութիւնը կորցրեց իր ազգային ինքնուրոյնութեան վերջին նշոյլն էլ, իր եկեղեցին: Մեր նպատակից դուրս է այդ անցքի մանրամասն նկարագրութիւնը: Կասենք այսքանը, որ այդ ամբողջ չարժումը մէկն է կղերական այն խաւար ու միշտ ատելի գործերից, որոնցով այնքան հարուստ է քրիստոնէական եկեղեցու պատմութիւնը: Մի կողմում Մելքիսէթների ու Նիկոլ-

*) «Կամենեց», եր. 203.

*) եղեռնց—«Ռոնի միութիւն հայոց Լեհաստանի», 1884, եր. 21.

տիկանի էնտէքսը այնչափ խիստ չեղաւ Տօքթ. Բաքալի հեղինակին համար որչափ մենք։

Այսպէս ենք մենք։ Ծօղուածագիրը փորձած է կուռել մեր այդ անմիտ նախապաշարմունքների դէմ, բայց ոչ այնքան ուժեղ կերպով։ Նա մեղք չէ համարում որ հայերէն լեզուն Զօլայի գրչի թարգման հանդիսանայ, բայց մոցնում է իր պաշտպանողական ճառի մէջ զանազան թէօրէթիւններ, որոնք խիստ սահմանափակում են Զօլայից փոխ առնելի գործերի թիւը։ Թող նոյն իսկ այդպէս լինի, եթէ նախապաշարմունքը միանգամից վերացնել անկարելի է։ Մեր հնադարեան հասկացողութիւնների մէջ մտցրած իւրաքանչիւր լուսաւոր ճառագայթ համակրանքի եւ ծափահարութեան արժանի է։ Կ. Պօլսի գրագէտները տարիների ընթացքում անբարոյականութիւն չէին համարում կերակրել ընթերցողներին Պարիզի բուլվարեան վէպերով, որոնց ընթերցանութիւնը կարող է միայն բթացնել՝ ցնդելով ղները զանազան իմարիգնեերով, սպանութիւններով, թունաւորումներով եւ այլն եւ այլն։ Անբարոյականութիւն չէր ճաշակ ու հասկացողութիւն վէպագնողները ու այլանդակելը, բայց անբարոյականութիւն էր Զօլան թարգմանելը, այն Զօլան, որ ներկայումս համաշխարհային հռչակ վայելող սակաւաթիւ վիպագրողներից մէկն է։ Եւ մենք ուրախ ենք որ այդպիսի անմիտ տրամադրութեան դէմ առաջին քայլ անողը հայ օրիորդ է, թէ եւ նրա թարգմանածը Զօլայի երկրորդական գործերից մէկն է, «Ցաւձակում ջրազացի վրա»։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼԷՔԱԼԱՔԻՑ

—

Յուլիսի 17-ին

Ամբողջ Անդրկովկասից լսւում են ցնծութեան ձայներ, ամեն կողմից դէպի վեր է բարձրանում քրտնաթոր գիւղացու երախտագիտական աղօթքը—հայը առատ է, ցանքսերը լաւ, սեւ մարդու սեւ օրը ապահովված, արտ ու արօտը լիացրել է երկրագործին... Բայց էլի Ախալքալաքի գաւառն է, որտեղից լսւում է գիւղացու խուլ հեծկլտանքը, էլի այս դժբաղդ անկիւնն է, որտեղի հոչակաւոր, հացաչատ ամբողջ դաշտավայրը իր տաններկու մեծ գիւղերով ենթարկվեց մի սոսկալի արշաւանքի, մի երկնային պատժի։ Հարիւրաւոր քառակուսի վերստ գարու եւ ցորենի արտերը հաւասարվել են գետնին ու չեն տայ ոչ մի բուռ հատիկ։

Այս բոլորը չնորհիւ չնչին, ողորմելի հայի բզէզների, որոնք սփռված գարու, ցորենի արտերը, ծծում են թէ ցօղունի տակից, թէ հասկի վրայից ամբողջ հիւթը եւ չորացնում, վերածացնում բուսականութիւնը... Անողորմ բնութիւնը այս երկու տարվայ մէջ ախալքալաքցու ճակատին ակօսեց վշտի կնճիռներ. երկու տարի է, որ ախալքալաքցին ծփում է ցաւ ու վշտի ծովի մէջ։

Որքան անզօր է մարդս բնութեան խաղերի դէմ։ Այսօր հազարաւոր մելամաղձոտ աչքեր ուղղված են դէպի ծփացող հասկերը, որոնց ամեն մէկի վրայից կախ են ընկել տասնաւորհայի բզէզներ եւ ծծում են այնտեղից ամբողջ հիւթը, որը մնում պիտի տար մեր թշուառ գիւղացուն... Ինչ անէ անճար, անտէր գիւղացին, ուր դիմէ, ում հայցէ։ Նա միայն մի միջոց ունի, իր աչքերը ուղղում է դէպի երկինք եւ իր կոշտացած, բիրտ ձեռներով արբում արտասուքը... Քրտինք եւ արտասուք, միայն այս ունի գիւղացին. նա ոգէտ է, նա չունի միջոց մաքառելու այդ չարիքի դէմ։ Եթէ աշխատանք կը պահանջէք, նա սովոր է աշխատելու, ոքնելու, չարչարվելու. նա իր հարիւրաւոր քրտինքի կաթիլները կը ծախէ չատ չնչին գնով, նա ցերեկը կը քամէ դառնութեան բաժակը, դիչերը կը ծախէ իր քունը, միայն թէ ազատէ իր ցանքսերը, ազատէ իր որդիներին քաղցից եւ մերկութիւնից։ Եւ այսօր նա գլխակոր, ձեռները ծոցին մտածում է իր անելանելի դրութեան մասին, նրա աչքերին պատկերանում է սեւ ապագան—Ախալքալաքի դաժան, բթալի ձմեռը։ Ինչով պահէ իր տունն ու տեղը, ինչով ամոքէ իր մղկտացող, անօթի զաւակներին, ինչ տայ քաոանչող ու մայող անասուններին, ինչով վճարէ հարկ ու խարջը, ինչով լռեցնէ անկուշտ վաչխառուի ձայնը։ Եւ այսպիսի հարիւրաւոր «ինչով» չարէ չար կանգնում են նրա մտքի առաջ եւ չուարված, մոլորված՝ նա չը գիտէ թէ ինչ անէ։

Այո, ասացէք, ինչ անէ խեղճ աչխատաւորը. նրա ձեռից գնում է իր ամբողջ աչխատանքը, ամեն քայլափոխում մարդու ոտների տակ որորվող այդ փոքրիկ, թոյլ միջատները այսօր տասը հազարաւոր մարդկանց զրկում են ապրուստի միջոցից, քայքայում նրանց տնտեսութիւնը, չատ չատերին մուրացիկ դարձնում, իսկ չատ չատերին էլ, ով գիտէ, ինչպէս պէտք է քաշտան իրանց ողորմելի կեցութիւնը։ Միջոց, միջոց տուէք մաքառելու այդ ինքն ըստ ինքեան չնչին, բայց ահաւոր թշնամու դէմ. բարի մարդիկ, սովորեցրէք խեղճ, թշուառ գիւղացուն ազատել իր դաշն քրտինքով չաղախված արտ ու արօտը։

Վ. Շահպարոնեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վեհափառ Կաթողիկոսի Լօռու գաւառամասում կատարած ճանապարհորդութեան մասին ստացել ենք հետեւեալ տեղեկութիւնները. «Յուլիսի 11-ին Վեհափառ Կաթողիկոսը ժամանեց այստեղ՝ Մարցի վանքապատկան կալուածները նայելու նպատակով։ Յայտնի է, որ վանքապատկան այդ կալուածների քառորդ մասը մանաւոր կալուածատէրերի սեփականութիւն է։ Երբ վանքը տարաբ վէճը, կալուածատէրերը առաջ եկան իրանց բաժինները ստանալու։ Բաժանումը կատարվեց կալուածատէրերի հաժար աչող հանգամանքներում, որովհետեւ վանքի կալուածների կառավարիչը մեծ սխալներ գործեց բաժանման միջոցին։ Մեր հոգեւորականութիւնը ուչ հակացաւ իր սխալը եւ գործը յանձնվեց դատարանին։ Կաթողիկոսը անձամբ եկել էր այդ բաժանումը գնելու եւ կալուածների չահագործման մասին անօրինութիւններ անելու։ Կալուածների կառավարութիւնն առ այժմ յանձնված է Թումայ վարդապետին եւ նրան օգնական է նչանակված Գեղամ վարդապետը, Հաղպատի վանքի նախկին վանահայրը։ Պէտք է նկատել, որ մի քանի մանանգէտ գիւղատնտեսներ այժմ մչակում են կալուածների չահագործման ծրագիրը։ Վեհափառը, անձամբ քննելով գործը, համոզվեց, որ բաժանման միջոցին ակնյայտնի անարդարութիւններ են կատարվել։ Կալուածատէրերը վերցրել են կալուածքի լաւ մասերը։ Մի օր կալուածները չրջելուց յետոյ, ամսի 13-ին, կաթողիկոսը ճանապարհ ընկաւ դէպի Դսեղ։ Շատ ժամանակ է, որ Լօռու գիւղերը կաթողիկոս չէ այցելած, ուստի եւ ժողովուրդն հեռաքրքրված էր։ Դսեղում ճաչելուց յետոյ, վեհափառը քահանաների եւ ժողովրդի ուղեկցութեամբ այդ օրը հասաւ Շահալի գիւղը, ուր եւ գիչերեց։ Այցելած գիւղերում կաթողիկոսն իջնում էր ձիուց, մանում եկեղեցիները, ուչադրութիւն էր դարձնում հնութիւնների վրա եւ պատուիրում էր, որ քահանաները լաւ պահպանեն նրանց։ Միւս օրը, ամսի 14-ին, Շահալուի հասարակութիւնը ճանապարհ ձգեց կաթողիկոսին դէպի Ղարաքիլիսա։ Կաթողիկոսը Ղարաքիլիսայում միայն ցանկութիւն չունեցր եւ անցնելու էր Համամլի։ Նա ամբողջ ժամանակ ճանապարհորդում էր ձիով եւ չը նայելով իր տարիքին՝ բոլորովին յոգնածութիւն չէր զգում։ Ի միջի այլոց Լօռում ժողովուրդը միջնորդեց խնչով վարձատրելու Կուրտանի ծխատէր Յարութիւն Եփրեմ քահանայ Տէր-Դաւթեանցին եւ Շամչուղ գիւղի ծխատէր քահանայ Տէր-Պօղոս Ռամազանեանցին։ Կաթողիկոսին ուղեկցում են Բարդուղիմէոս ու Կորիւն վարդապետները եւ իր դիւանատան պաչտօնեան։»

—

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Բաթումի եւ Միխայլօվո կայարանի մէջ չինված է նաւթանցք։ Առաջին օրերը նաւթանցքով փոխադրվող սպիտակ նաւթը ստացվում էր Բաթումի մէջ ոչ կատարելագէս մաքուր։ Նաւթը աղտոտվում էր այն իւղից, որով օծված էին խողովակի հանգոյցները։ Այժմ նաւթի որակութիւնը լաւացել է եւ դարձել բնական։

—

Մեր երկրի այն մասերը, որոնք ենթարկվել են ֆիլոկսերայի աւերիչ ազդեցութեան, սկսել են մչակել ամերիկական տեսակի վազեր, որոնք չեն չլասվում այդ միջատից։ Քութայիսի նահանգում ամերիկական վազեր տարածված են ոչ միայն կալուածատէրերի, այլ եւ գիւղացիների չրջանում։ Երկրագործութեան մինիստրութիւնը հիմնել է ամերիկական վազերի համար յատուկ մանկարաններ, որոնց տարածութիւնը Քութայիսի նահանգում 20 եւ Թիֆլիսի նահանգում 5 դեսեատին։ Ամերիկական վազերը սկսում են տարածվել նաեւ հարաւային Ռուսաստանում։

—

Նիժնի-Նովգորոդի տօնավաճառը պաչտօնապէս բացվեց յուլիսի 15-ին, տօնավաճառային առեւտրականների կատարեալ բացակայութեամբ։ Բայ խանութներ չը կան նոյն իսկ պատսաժներում։ Տօնավաճառային բեռները աչող են տեղ հասնում ջրային ճանապարհով։

—

Կիեվի լրագիրները հաղորդում են, թէ այնտեղի պօլիտեխնիկումի չինութիւնը, որ կը նստի մօտ 4 միլիօն, կը վերջանայ սեպտեմբերին։ Հանդիսաւոր բացումը կը կայանայ հոկտեմբերի 17-ին։

—

Լրագրական տեղեկութիւններին նայելով ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կազմել է կենսաթոչակի դրամարկղի կանոնադրութիւն՝ ժողովրդական տարրական դպրոցներում ծառայող ուսուցիչների եւ ուսուցչուհիների համար։ Իրրեւ օժանդակութիւն այդ դրամարկղին՝ մինիստրութիւնը խնդրում է տալ իւրաքանչիւր տարի պետական գանձարանից 120,000 րուբլի։ Դրամարկղի կանոնադրութեան համաձայն՝ նրա անդամները լինում են երկու կարգի—պարտաւորված եւ ազատական անդամներ։ Դրամարկղի պարտաւորված անդամներ համարվում են այն տարրական դպրոցների ուսուցիչներն եւ ուսուցչուհիները, որոնք պահվում են պետական գանձարանի միջոցներով կամ օժանդակութիւն են ստանում նրանից, իսկ այն տարրական դպրոցների ուսուցիչներն եւ ուսուցչուհիները, որոնք դասվում են թէ ժողովրդական լուսաւորութեան եւ թէ միւս մինիստրութիւնների լոկ հսկողութեան տակ, կարող են անդամ գրվել դրամարկղին, իբրեւ ազատական մասնակցողներ։ Մինիստրութեան ցանկութիւնն է այս կանոնադրութեամբ հիմնել մի այնպիսի կենսաբնական դրամարկղ, որին այս կամ այն կերպով մասնակցէին պետութեան բոլոր տարրական դպրոցներում ծառայող ուսուցիչներն եւ ուսուցչուհիները։

—

Ս.ՌԱՓԵԼ գիւղից (Զիբրայէլի գաւառ) մեզ գրում են. «Մեր գիւղում, որ Զիբրայէլից միայն երեք վերստ հեռաւորութեան վրա է, կարմրուկը զոհեր է տանում։ Զիբրայէլում հոան ասել էին. ամսոս 18-ին մեզ մօտ էր եկել բժիչկը պրիտաւի հետ հիւանդութեան մասին ճիչդ տեղեկութիւն իմանալու։ Բայց գիւղի «աղաախակները», հաւատացնելով թէ գիւղում գոյութիւն չունի ոչ մի հիւանդութիւն, ճանապարհել էին երկուսին էլ, իսկ իր կամքին թողած կարմրուկը, մի տանից միւսը

տների մէջ մարմնացած ծայրայեղ անբարեխղճութիւնը, յանցաւոր փառամոլութիւնը, արծաթապաչտութիւնը, միւս կողմում—եղուիտական խորամանկութիւններ, վայրենի բռնութիւն, նուրբ խաբեբայութիւն, կրօնական առուծախ։ Երկու կողմն էլ յանցաւոր, երկուսի արարքներն էլ անբարոյական, զզուելի։ Անկեղծ մարդը, որ դաւանական նախապաչարմունքներից վեր է եւ որի համար ամենից նուիրականը մտքի ու խղճի ազատութիւնն է, չէ կարող զզուանքով երես չը դարձնել այդ տեսարաններից, որոնց մէջ հերոսները կամ ոգէտ ու բուռ հայ հոգեւորականներն են, կամ արեւմտեան աւելի զարգացած, բայց ֆանատիկոս, կրօնը քաղաքական տիրապետութեան գործիք դարձրած կղերը։ Այդ տեսարանները միայն այն են հաստատում, որ մարմնով գերի ու հարստահարվող հայը բռնութիւնների, տանջանքների առարկայ էր եւ հոգու գործերի մէջ։ Եւ ինչպէս այդ մարդը պիտի կարողանար հասկանալ թէ աչխարհի մէջ կայ եւ ազատութեան գաղափար...

IV

*Մենք ասացինք, որ հաւատի պրօպագանդան միաժամանակ աւելի եռանդուն դարձրեց իր գործունէութիւնը եւ Հայաստանում։ Այդտեղ, Նախիջեւանի գաւառում, վաղուց գոյութիւն ունէր հայ կաթոլիկների (ունիթօրների) համայնքը, որ կարող էր կաթոլիկութեան կորիզ դառնալ, բայց երկար ժամանակ համարեա ժողովրդութեան էր մատնված Հռոմի կողմից։ Պրօպագանդան իր սկզբնաւորութեան օրից ուչադրութիւն դարձրեց իր այդ հեռաւոր հօտի վրա, որի թիւը, եթէ հաւատանք ունիթօր վարդապետների ցուցմունքներին, XVII դարի սկզբում հասնում էր 19,000-ի *)։ Պրօպագանդան Նախիջեւանի գաւառում բաց արեց մի դպրոց, որի ուսուցիչները Եւրոպայից ուղարկված կրօնաւորներն էին եւ որը, ուրեմն, բարձր պիտի լինէր Հայաստանում եղած բոլոր միւս դպրոցներից։ Բացի դրանից կաթոլիկ հայը կրթութիւն կարող էր ստանալ եւ Հռոմում, Պրօպագանդայի դպրոցում։ Բայց որքան էլ եւրոպական կրթութիւնը ժամիկ լինէր հայ կաթոլիկ համայնքին, մենք չենք տեսնում, որ նա զարգացումով բարձր լինէր միւս հայերից, որոնց կըրթարանները աղքատ ու տգէտ վանքերն էին։ Գոնէ հայ կաթոլիկներից չեն դուրս գալիս յայտնի եկեղեցական գործիչներ կամ այնպիսի ընդունակ մարդիկ, որոնք նոյն իսկ կարողանային հաւասարվել Սիմեոնայ դպրոցի աչակերտներին իրանց գրական վաստակներով։*

Իսկ է սա ցոյց տալիս։ Պրօպագանդան միայն կաթոլիկութիւնն ունէր ի նկատի եւ նրա դպրոցները նեղ դաւանական հիմնարկութիւններ էին, որոնց մէջ լատինական լեզուն էր առաջնակարգ տեղը գրաւում։ Հայ կաթոլիկ վարդապետների ողորմելի հայերէնը, որի չատ նմուչներն են մնացել, մի լաւ ապացոյց է, որ կաթոլիկ եկեղեցին ամենեւին միտք չունէր իր ծոցում պատրաստել կրթված հայեր. նրա համար բաւական էր եւ այն, որ հայը ոչնչով չը զանազանվելով իր տգէտ հայրենակցից, լաւ իմանար դաւանական հարցերը, եկեղեցական գրքերի հետ ծանօթ լինէր։ Եւ այնքան խակ ու խեղճ էին հայ կրօնաւորները, որ նոյն իսկ չը կարողացան իրանց աչխատութիւններով ծանօթացնել եւրոպացիներին հայերի, նրանց լեզուի, գրականութեան հետ։ Որ այս անկարողութիւնը

*) Ն. Ալիշան—„Սիսական", եր. 387։

լոկ տգիտութեան նչան էր եւ ոչ թէ կաթոլիկ եկեղեցու քաղաքականութեան հետեւանք, այդ կարելի է իմանալ նրանից, որ լատին կրօնաւորները իրանց քարոզչութեան հետ կապում էին նաեւ հայերէն լեզուի ուսումնասիրութիւնը գիտական նպատակով եւ այդպիսով էլ հայագիտութեան սկիզբը դրին Եւրոպայում։

Այսպէս միակողմանի ու սահմանափակ էր Պրօպագանդայի նաեւ տպարանական գործունէութիւնը։ 1623 թուականին նա հրատարակում է երկու հայերէն գիրք. մէկը «Այբբենարան», որ Պրօպագանդայի տպարանի առաջին գործն է, իսկ միւսը ունի հետեւեալ վերնագիրը. «Միաբանութիւն Հայոց ընդ Հռոմայեցւոյ եկեղեցւոյն, վասն պարզաբանութեան նոյն օրինացն, եւ եօթն խորհրդոց սուրբ եկեղեցւոյ. եւ այլ եւս քաղում սուրբ խորհրդոց, որ եղեւ հրաժանօք Էճենիոսի չորրորդի սուրբ փափին ի Հռոմէ Ֆիօրենցւոյ, թ. Ռնէթ։ Եւ հրամանաւ արքային Գրիգորիոսի հնգեւտասաներորդի սուրբ փափին. այլ եւս սուրբ Հռոմայոյն, որ վասն հաստատութեան հաւատոյ են կարգեալ կազմեալ եղեւ»։ Այս գիրքը թարգմանել է Բարդուղիմէոս անունով մի հայ կաթոլիկ քահանայ։

Ֆիօրենցայի կամ Ֆլորենտինեան եկեղեցական ժողովը 1438-ին գումարվել էր գլխաւորապէս եկեղեցիների միութեան համար։ Հռոմը վաղուց էր աչխատում ջնջել յունական հերձուածը եւ հպատակեցնել արեւելեան այդ մեծ եկեղեցին իր իչխանութեան։ Քանի որ Բիւզանդիան այժ էր զգում իր մէջ, պապերի այդ տիրապետական տենչերը արհամարհանքի էին արժանանում Բօսֆորի ափերի վրա։ Բայց երբ օսմանեան թիւրքերի արշաւանքները բոլորովին չլատեցին յոյների ոյժը եւ անխուսափելի դարձրին Բիւզանդիայի վերջնական անկումը, այն ժամանակ Կ. Պօլսի արքունիքը սկսեց դաչնակիցներ որոնել Արեւմտեան Եւրոպայում եւ այդ բանը աջողեցնելու համար՝ համաձայն էր վերացնել նոյն իսկ կրօնական հակառակութիւնները արեւմտեան եւ արեւելեան եկեղեցիների միացմամբ, թէեւ այս միացումը ոչինչ համակրութիւն չունէր բիւզանդական պետութեան մէջ։ Փլորենտինեան ժողովում ներկայ էին յունաց կայսրը, պատրիարքը, նչանաւոր եկեղեցականները, որոնք երկար ու անօգուտ աստուածաբանական վէճերից յետոյ հարկադրված եղան ընդունել Հռոմի գերիչխանութիւնը, համոզված լինելով, որ պապը ամենազօրեղ իչխանատէրն է Եւրոպայում, կարող է ամեն ժամանակ հրամայել արեւմտեան թագաւորներին միանալ Բիւզանդիայի հետ՝ միասին կռւելու թիւրքերի դէմ։ Եւգենիոս պապը հրաւէր էր ուղարկել նաեւ հայոց կաթողիկոսին, ինչպէս նաեւ նեստօրականներին, զրաներին։ Այս բոլոր քրիստոնեաները ներկայացուչիչներ ունէին ժողովում եւ յոյների հետ ընդունեցին միութիւնը։ Այդպէս էլ գրվեց։ Պապը իր մի կոնդակով հաճութիւն եւ բարեկամութիւն յայտնեց հայերին, ասաց որ ինքը երբէք չէ էլ կասկածել թէ հայերը սկզբից եւ եթ Հռոմի աթոռին հպատակ են եղել եւ հրահանգներ տուեց թէ ինչպէս պէտք է կատարել եկեղեցական խորհուրդները՝ հերձուածող չը մնալու համար։

Հեչտ էր իտալական մի քաղաքում, թղթի վրա, կայացնել միութեան վճիռ. բայց այդքան հեչտ չէր վերացնել իրականութեան մէջ դարաւոր նախապաչարմունքները, արիւնով եւ

ՊՐԱՆՍԻԱՑ ՅԱՂՈՒՍՏՆԵՐ

(Ալեքսանդր Դյումայից)

— 19 —

ՄԱՀՎԱՆՑ ՏՈՒԺԸ ՎԱՂՎԱՆՈՒՄ Է

Իսկ Բրիգելլը, տարաբախտ Բրիգելլը, ապշած ու ապակենտրոն, ոչ մի բառ չէր կարողանում արտասանել, ոչ մի ձայն չէր լսում, ոչ մի շարժում չէր անում, ոչ մի միտք չէր հղանում...

Ֆրանսիայի նախարարները չէին կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի է այդքան արագ կորցնել ամեն ինչ, ինչպես կարելի է այդքան հեշտությամբ ոչնչանալ...

Իսկ նրանք ոչնչացել էին, ոչնչացել էին ամբողջովին, ոչնչացել էին այնպես, որ ոչ մի հետք չէր մնացել նրանցից, ոչ մի հետք չէր մնացել նրանց գործերից, ոչ մի հետք չէր մնացել նրանց ծրագրերից

Բենենկամպի մաքրեց Մախօ փիղը եւ թողեց այնտեղ սակաւաթիւ զօրաբաժին, որպէս զի չոգենաւերը կարողանան ազատ երթեւեկութիւն ունենալ։ Յուլիսի 16-ին Բլագօվեչչենսկ հասան օգնական զօրքի առաջին խմբերը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ *Աժերիկական դեսպան Զօէա հաղորդեց Սօլիսբիւրիին, թէ Միացեալ-Նահանգները վճռել են արշաւանքը դէպի Գեկին սկսել անյապաղ։ Սօլիսբիւրի պատասխանեց, թէ նոյնն է եւ Մեծ-Բրիտանիայի որոշումը։*

ՏԵԱՆՋԻՆ։ *Գեներալ Գեզլին եկաւ յուլիսի 15-ին. եկան նմանապէս բազմաթիւ օգնական զօրքեր։ Արշաւանքը պէտք է սկսվի իսկոյն։ Ռուսներն եւ եւրօպացիները տեղափոխում են առաջապահներին դէպի Գէլիան։*

ԲԵԼԳՐԱԴ։ *Ռուսաց կայսրը համաձայնվեց վկայ լինել թագաւորի պսակադրութեան հանդէսին եւ յանձնարարեց ռուսաց լիազօր Մանասուրովին Նորին Մեծութեան փոխանորդը լինել։*

ՇԱՆԳՀԱԻ։ *Շանգունի նահանգապետը հեռագրել է այստեղի բրիտանական ընդհանուր հիւպատոսին, թէ նրա գրութիւնը յանձնված է Մակդոնալդին, որի պատասխանը ուշած է ցունգ-լի-եամէնին՝ հիւպատոսին հասցնելու համար։*

ՀՌՕՄ։ *Արքայական զոյգը եկաւ առաւօտեան եւ ուղեւորվեց Մօնցա, ուր կը հանգի երեկոյեան։*

ԲԵԼԳՐԱԴ։ *Ալէքսանդր թագաւորի պսակադրութիւնը տեղի կունենայ կիրակի օրը։*

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացք։		№ 3 գնացք։	
Բագուից դուրս է գալիս ցեր.	4 ժ. 1 ր.	գիշ.	11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 » 53 »	եր.	5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 » 32 »	եր.	6 » 34 »
Բաթում է հասնում եր.	9 » 1 »	առ.	7 » 14 »
№ 6 գնացք։		**№ 4 գնացք։**	
Բաթումից դուրս է գալիս առ.	7 ժ. 50 ր.	եր.	7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում եր.	7 » 15 »	առ.	8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	7 » 18 »	»	10 » 05 »
Բագու է հասնում ցեր.	12 » 10 «	»	5 » 16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր.	11 ժ.	19 ր.
Բաթում է հասնում	երեկ.	9 »	41 »
Բաթումից դուրս է գալիս. . . .	գիշ.	11 »	18 »
Թիֆլիս է հասնում	առաւ.	9 »	30 »

—

Թիֆլիսից գէպի Կարս դուրս է գալիս.	երեկ.	9 ժ.	—
Ալէքսանդրօպոլ հասնում է . . .	առ.	7 »	46 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	3 »	29 »
Ալէքսանդրօպոլից դուրս է գալիս .	երեկ.	8 »	35 »
Թիֆլիս հասնում է	առ.	7 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վէներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկովաճի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Ի. Ֆ. Պրօստեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի և կրծքի հ.

Զ. Ի. Բաբաճանեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօստեվիչ—6—7 ժ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիթակի—առաջ. ծաղկահատ և բժշկական մայրաքաղց. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՀԱՅՏՊԱՏՈՒՄ“-Ի

Աչխատասիրութիւն

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆԻ

Գործ է հաւաքումն պատմչաց հայոց՝ ժամանակագրական կարգաւ, սկզբէն մինչեւ ԺԷ դար։ Հաւաքիչն աչխարհաբար լեզուաւ կը յաւելու բացատրութիւններ եւ ծանօթութիւններ՝ իւրաքանչիւր իմն ներքեւ։ Գիրքը լոյս է տեսնելու քառածալ, մեծագիր, չքեղ թղթի վրա եւ պատկերազարդ։ Բաժանորդագինը կանխիկ 12 ր., լոյս տեսնելուց յետոյ 20 ր.։ Դիմել՝ Թիֆլիս կենտրօնական գրավաճառանոցը։

(ուրբ.) 3—3

Въ непродолжительномъ времени поступятъ въ продажу новыя книги, соч. И. Я. Бронъ-фонъ-Бреннеръ

1] **Курсъ коммерческой ариѳметики,** 2-е изданіе.

2] **Самоучитель двойной бухгалтеріи** и

3] **Руководство по составленію отчетовъ.**

Въ виду большихъ требованій и ограниченнаго количества экземпляровъ, принимается заранѣе, до выхода, подписка у автора. Тифлисъ. Михайловская, 71.

1—20

ՀՐԱԽԷՐ

Հրեչտակապետաց եկեղեցու հին երէցփոխ Դարչօ Միրզեանցի մահուան պատճառով լինելու է յիշեալ եկեղեցու նոր երէցփոխի ընտրութիւն այս ամսի 23-ին, առաջիկայ կիրակի օրը, 12 ժամին. ուստի յիշեալ եկեղեցու բանակաչ ծխականները հրաւիրվում են որչեալ ժամին ներկայ լինել յիշեալ եկեղեցում նոր երէցփոխ ընտրելու համար։

Գործակալ ա. մ. եկ. հ. Թիֆլիսի՝
2—2 *Զաքարիա քահ. Զարդեղեանց*

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, ժուռերը, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2½ րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Մխքայելեան կամուրջի վրա, Գափովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անվիջապէս՝ պօստով։

95—100



ՆԿԱՐԻՉ ԲԱԺԻՆՋԱՂԵԱՆԻ

ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ ՊԱՐԻԶՈՒՄ

քաց է հասարակութեան համար ամեն օր, առաւօտեան ժամի 10-ից մինչեւ 2-ը կէսօրից յետոյ։ Boulevard Montparnasse, 132.

2—3

Լոյս տեսաւ

ՀՈՍՀՈՍԻ ՉԵՌՍՏԵՏՐԸ

Պարոնեանի, բ. տպագր. (հեղինակի պատկերով)

ԳԻՆՆ Է 1 րուբլի։

Դիմել—Թիֆլիս, կոնտորա Общества Изданія Армянскихъ книгъ (Лорисмеликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres arméniens. Ընկերութեան անդամ լինելու համար վճարում են տարեկան 6 րուբլի եւ ստանում 8 րուբլու գրքեր։ Ընկերութեան գրասենեակում վաճառվում են ընկերութեան գրքերը։ Յանկացողներին ձրի ուղարկվում է գրացուցակ։

2—4

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ օրերը լինելու են ընտանեկան երեկոյթներ։ Մանկական երեկոյթներն այլ եւս տեղի չեն ունենալու մինչեւ նոր կարգադրութիւն անելն այդ մասին։

1—3

Ուղարկվեց բաժանորդներին

«ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԸՆ ԵՒ ՆԵՐԿԱՑԸՆ»

I մաս

կիլիկիայի քարտէզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով եւ զէյթունցի կարիճի պատկերով։

Գինը 1 ր. 50 կ. կամ 3 ֆրանկ 75 ս.

Դիմել Ռուսաստանից՝ Тифлисъ. Центральная книжная торговля, *իսկ արտասահմանից՝* Mechitharisten—Buchdruckerei, Wien, VII/2, Mechitharistengasse 4. 1—10

ՉԻՄԱՆԻ ՓՆԱՐԻ

առիթով չարունակ ստացվող զանգատները ստիպում են յայտնել յարգելի բաժանորդներին, որ մինչեւ 1899 թ. օգոստոսի 3-ը կենտրօնական գրավաճառանոցում ստացված բաժանորդագրութեան գրամները եւ բաժանորդների հասցէները յանձնված են պ. Չիւանիին, իսկ այնուհետեւ ստացվածները՝ տպարանատէր Կոստանդին Յովհաննիսեան Մարտիրոսեանցին, որի տպարանում կենտրօնացած է բաժանորդագրութիւնը, ո սոի խոնարհաբար խնդրում ենք այս առիթով գրութիւններն ուղղել կամ հեղինակ հրատարակչին եւ կամ պ. Կ. Մարտիրոսեանցին ԵԻ ՈՉ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻՆ, որն այդ հրատարակութեան հետ ոչ մի առնչութիւն չունի։

կենտրօնական գրավաճառանոց
(ո) 1—3

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

За успѣшныя занятія благодарности.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная итальянская), 2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 5) Торговыя и вексельныя узаконенія и 6) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Начало занятій съ каждаго перваго числа мѣсяца. 2—20

Годъ занятій одиннадцатый.

Преподав. ведется по собств. сочиненіямъ.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՊԱՆՍԻՕՆԸ ԱՄՍՈՒՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԲՕՐԺՕՄ ԱՄԱՐԱՆՑՈՒՄ, ԻՍԿ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Թէ Բօրժօմում եւ թէ Թիֆլիսում ընդունում է աշակերտներ, պատրաստում է գիմնազիաների, կադետների հօրպուսի, զեմլէմէրների, էյալական, առեւտրական եւ այլ ուսումնարանների համար։

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնատած մանկավարժներ, գիմնազիական ուսուցիչներ։ Աւանդելի առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աչխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց եւ ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն, երաժչտութիւն։

Նոյնպէս ընդունվում են ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ։ Օրաթաքաղաքացիների համար կան ամենայն յարմարութիւններ։

Հասցէն, БОРЖОМЪ. Гротовская ул., ПАНСІОНЪ ТЕРЪ-АКОПВА. ТИФЛИСЪ, Гановская ул. № 11. 6—10

3—26

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՑՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ առաջիկայ ուսումնական տարվայ համար հարկաւոր են՝

1) *Մի տեսուչ, որ պիտի ունենայ 8—12 դաս չաբաթական, տարեկան 2000 րուբ. ռոճիկով*
2) *Կրօնական եւ եկեղեցական առարկաների համար երկու ուսուցիչ։*
3) *Եկեղեցական երգեցողութեան եւ ձայնագրութեան համար երկու ուսուցիչ։*
4) *Հ. լեզուի, հ. մատենագրութեան, հ. պատմութեան, հ. աչխարհագրութեան համար չորս ուսուցիչ։*
5) *Ռ. լեզուի, ռ. պատմութեան եւ ռ. աչխարհագրութեան համար երեք ուսուցիչ։*
6) *Գերմաներէն լեզուի, հոգեբանութեան եւ տրամաբանութեան համար մի ուսուցիչ։*
7) *Մաթեմատիքական եւ բնագիտական առարկաների համար երեք ուսուցիչ։*
8) *Գեղագրութեան եւ գծագրութեան համար երկու ուսուցիչ։*

Իւրաքանչիւր ուսուցիչ չաբաթական կունենայ առնուազն 20—24 դաս։

Համալսարանականների դասագինն է քառասնական րուբլի, իսկ ճեմարանը, թեմ. դպրանոցը եւ ռ. ուսուցչանոցը աւարտողներին երեսնական րուբլի։

Համալսարանականներն ու ճեմարան աւարտողները դասեր կունենան բարձր դասարաններում, իսկ միւսները ստորին դասարաններում։

Ինդրատուները պարտաւոր են իրանց խնդրագրի հետ ներկայացնել իրանց ուսման վկայականները մինչեւ ներկայ տարվայ օգոստոսի 10-ը։

Մանրամասն պայմանների մասին առանձին։

Ամեն տեսակ խնդիրներ եւ թղթակցութիւններ պիտի ուղարկվեն այս հասցէով՝ Эривань, Попечительству армянской духовной семинаріи.

Հոգաբարձութիւնս սրանով յայտարարում է նաեւ ի գիտութիւն հայ հասարակութեան, որ ներկայ տարվայ օգոստոսի 25-ից պակվելու են վերաքննութիւններ, իսկ սեպտեմբեր ամսի 1-ից նորակ աչակերտների ընդունելութիւններ եւ չարունակվելու են մինչեւ նոյն ամսի 15-ը. այնուհետեւ ոչ մի ընդունելութիւն չէ կարող տեղի ունենալ։

Անդամ հոգաբարձութեան՝ Տ. Տէր-Յակովբեան

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Іюля 1900 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.